


«La Vernice» (Վենետիկ), «Valori», «Sodalizio» (Պոլոնիա), «Gazzetta del Veneto», «Gazzetta veneta», «Il Veneto» (Փատուա), «Vernice» (Թրիեստ), «La Gazzetta di Modena» եւ «Gazzetta dell'Emilia» (Մոտենա), «Il Giornale di Vicenza» (Վիչենցա), «Alto Adige» «Պոլ-ցանոյ», Եւայլն, Եւայլն:

1948ին, զեղարուեստի մասին՝ արժէ-քաւոր ճառ մը պատրաստած եւ կարգա-ցած է «Պատկերաւոր Արուեստի Միջազ-գային Ա. Ժողով»-ի ընթացքին: Այդ ճա-ռը, իր շահեկանութեան համար, առան-ձին հատորով լոյս տեսած է նոյն տար-ուան ընթացքին:

1955ին, Lionello Venturi-ի հրաւերով, հիանալի վիճադրութիւն մը պատրաստած է Հռոմի Գեղարուեստասէրներու Ընկե-րութեան համար:

1948ին, Վենետիկի Bevilacqua La Ma-ssa ցուցասրահի զատական կազմին, իսկ 1963ին եւ 1964ին, Վենետիկի Արուեստի Գործերու հսկողութեան խորհուրդին ան-դամ ընտրուած է, բայց յետոյ հրաժա-



Լ. Մ. - «Կարմիր պտուղը», իւղաներկ
(80×80 հրդմ.), 1964:

րած է այդ պատիւէն՝ անձնական պատ-ճառներէ մղուած:

1964ին, Giovanni Cavicchioli հեղինա-կին՝ «Il Vecchio Maestro» զիրքին յառա-ջարանը զրած է:


Հարուստ է նաեւ շարքը իր ճառախո-սութիւններուն, որոնց նիւթը եղած է ընդ-հանրապէս նկարչութիւն եւ նկարիչներ:

Հին եւ նոր արուեստագէտներու մասին ունեցած է անթիւ ասուլիսներ, Tiepo-լոյն սկսեալ մինչեւ Cézanne, Georges Rouault, Arp, Bonnard, Ensor, De Pisis, P. Klee, Modigliani, Եւայլն, Եւայլն:

Giovanni Cavicchioli-ի ներածականով, V. Amicucci, Լեւոն Մինասեանի նուիր-ուած հատոր մը հրատարակած է 1958ին, որուն մէջ հայ նկարիչէն քառասուն նը-կարներ տպուած են սեւ-ճերմակի վրայ:

Քառասուն տարուան ընթացքին, Լ. Մինասեանի ստեղծած հազարէ աւելի ար-ժէքաւոր նկարներէն ոմանք կը դառնան Վենետիկի Արդի Գեղարուեստի միջազ-գային թանգարանին, Միլանի, Պրինտի-զիի, Վերոնայի, Փատուայի, Թրիեստի, Փիզայի, Լոնտոնի պատկերասրահներուն մէջ, ինչպէս նաեւ Arp-ի, Peggy Gugen-heim-ի եւ շատ մը անհատական հաւաքա-ծոներուն մէջ:

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ



Լ. Մ. - «Բարձրացող ձեւը», իւղաներկ
(70×90 հրդմ.), 1965:

ՈՂՈՂՈՒՄ Ս. ՂԱԶԱՐԻ

4 ՆՈՅԵՄԲԵՐ 1966

Նոյեմբեր 4ի ջրհեղեղը, որ հարուածեց զրեթէ բոլոր Իտալիան, մանաւանդ Ֆի-րենցէ ու Վենետիկ քաղաքները, չինայեց նաեւ Ս. Ղազարին, հակառակ որ անոր պարիսպները մնացին անխորտակելի:

Աննախընթաց մակընթացութիւն մը, որուն նմանը չի յիշատակուիր հազար տարիէ ի վեր, միացած հարաւ-արեւե-լեան կատաղի քամիին (120 հզմդր. ժա-մական արագութեամբ), խուժեց յան-կարճ Վենետիկի խաղաղ լճակին վրայ: Յորդահոս անձրեւը կու տար իսկական ջրհեղեղի մը տխուր պատկերը:

Ծովի ջուրը բարձրացած էր մէկ ու կէս մեղրէն աւելի, սովորական աստիճանէն վեր: Վանքի մեծ ու փոքր նաւամատոյց-ներէն եւ շրջապատի այլ յարակից մուտ-քերէն անդամ (չպատահած եղելութիւն) ջուրը խուժեց ներս. մայր դրան առջեւ հասաւ մինչեւ 1,13 մ. բարձրութեան: Հակառակ որ ստորին յարկի սրահները թեթեւ զառիւկեր մը ունին, յորդահոս ջուրը մտնելով հիւրանոցէն, առաջացաւ մինչեւ խոհանոց, ճաշարան, եկեղեցի, շտեմարաններ, աշխատասրահներ ու նեակներ, նորընծայարան, ներքին մա-տուռ:

Ըստ վանքի ժամանակագրութեան, 1916ի Նոյեմբեր 21ին տեղի ունեցած է մեծ մակընթացութիւն մը եւ ջուրը սեղա-նատան մէջ հասած է մինչեւ 0,38 մ. բարձրութեան. այս անգամ սակայն բար-ձրացաւ մինչեւ 0,78 մ.: Իսկ եկեղեցին, ջուրը անցնելով առեանէն, մտաւ դաս ու բարձրացաւ մինչեւ աւագ բեմի երրորդ աստիճանը (0,44 մ. դասին մէջ): Թէ՛ 1916ի, թէ՛ 1935ի եւ թէ՛ 1951ի մակըն-թացութիւններուն, ջուրը չէր մտած դաս:

Վանքի քառանկիւնին ներքին պարտէ-զը, արտաքին պարտէզին մեծ մասը եւ այլքին երկար ժամեր մնացին աղի ջուրե-րու տակ. սովորական պայմաններուն, ջուրը վեց ժամուան ընթացքին կը սկսէր քաշուիլ. այս անգամ յամառօրէն մնաց 12 ժամէն աւելի: Իմացանք, որ Վենետի-կի լճակին պաշտպան՝ դարաւոր հսկայ թուփերն ալ խորտակուեւ եւ ծովի ահեղ ալիքներուն զիմաց, եւ Ազրիականը կա-տաղօրէն խուժեւ է ներս:

Ս. Ղազարի վարի յարկերէն մասնաւո-րաբար վնասուեցան սեղանատան եւ եկե-ղեցւոյ ընկոյզէ որմնատախտակները, ներքնայարկի կահ-կարասիները. իսկ մարմարեայ սիւններուն վրայ իջաւ նաւ-թային թանձր մրուր մը: Ջերմարաշխի կեղերոնները, իրենց ելեկտրական սարքե-րով ու բոցահան մեքենաներով սուղուե-ցան ջուրերու տակ: Դադրեցաւ ելեկ-տրութիւն ու հեռաձայն:

Մինչ մէկ կողմէն ջուրերը կը բարձրա-նային ահեղ թափով, ներսը պայքարը սկսած էր փրկելու համար կարելին. միա-րաններ ու աշակերտներ կը բարձրացնէին եւ ապա քիչ մըն ալ աւելի կը բարձրա-ցնէին ամէն թանկագին առարկայ, գիրք ու լրագիր:

Հակառակ ամէն նախազուշուրեան, ջուրը մտաւ նաեւ տպարան, որ թէեւ ներքնայարկի վրայ, սակայն հինգ աստի-ճան աւելի բարձր է միւս յարկարաժին-ներէն: Տպագրական բաղձաթիւ մեքենա-ներու ներքնամասերը մնացին աղի ջու-րին տակ:

Երկրասարդ վարդապետներէն յանդրդ-նադոյններ բոկոտն իջան տպարան, զրե-թէ լողալով, փրկելու համար այնտեղէն ալ կարելին. ի մասնաւորի, հայկական



Ս. Ղազարի մուտքը, Նոյեմբեր 4ի կեսօրին:

մանրանկարչութեան նորատիպ պրակնե-
րը. եւ... յաջողեցան: Դժբախտաբար
անկարելի եղաւ պարպել զբաւաճառա-
նոցի հսկայ շտեմարանը, ուր ջուրը շուրջ
կէս մեղր բարձրութեամբ մտաւ: Բաւա-
կան թիւով հին ու նոր տպագրութիւններ
թաղուեցան ջուրերու տակ, խլելով ար-
ցունքը բոլոր միաբաններուն:

Անդին, քամին պարտէզին մէջ կը տա-
պալէր հսկայ ու դեղեցիկ ծառեր. բայց
այդ այնքան չէր մտահոգեր մեզ, որքան
մշակութային գանձերը:

Բարերախտաբար դրաղարանի, ձեռա-
դրատան, դիւանի, լրագրային հաւաքա-
ծոներու ճոխ բաժինները կը գտնուէին
վերին յարկերուն մէջ, ուր ջուրը չէր
կրնար հասնիլ: Որեւէ վտանգ չպատահե-
ցաւ այդ գանձերուն: Սակայն, ստորին
յարկին մէջ բաւական վնասուեցան լրա-
դրային հաւաքածոներու երկրորդ օրի-
նակները:

Այս բոլորը հաղիւ քանի մը ժամուան
ընթացքին: Առաւօտեան ժամը 9 կ'անց-
նէր, երբ զգացինք ջուրերուն խուժումը.

կէսօրին արդէն ամէն ինչ ջուրին տակ էր
սուղուած:

Վարդապետներն ու աշակերտները,
ջուրերու դէմ պայքարելէ ետք, հուսկ
քաջուեցան վերի յարկերը՝ չոր ճաշ մը
կատարելու: Բարերախտաբար, տօնակա-
ն օր ըլլալով, հացը նախորդ օրէն եկած էր,
ու դոնէ ատիկա չպակսեցաւ: Իսկ մնա-
ցած ուտելիքները վարի մասանէն վեր
փոխադրելու համար՝ մինչեւ իսկ դուար-
ճալի հնարքներու հարկ եղաւ դիմել:

Ու միթեց. իջաւ տխուր երեկոն սառ-
ջուրերուն վրայ. վառեցան մոմերը. բայց
ջուրը կը մնար յամառօրէն: Գիշերուան
ժամը տառի տակներն էր, երբ նշմարե-
ցինք՝ թէ ջուրը վերջապէս սկսած էր քաշ-
ուիլ: Արդէն կը մարէին մոմերն ալ. կը
վառէր լոկ յոյսը: Հովը դադրած էր.
սասողազարդ դիշեր մըն էր:

Առաւօտուն դարձեալ խոնաւ օդը պա-
տեր էր. ջուրերը բոլորովին քաջուած
էին, ձգելով սակայն ջարդի ու թալանի
տխուր տպաւորութիւն: Եւ ահա դարձեալ
գործի. մաքրելու, սրբելու եւ տեղաւո-

րելու ամէն ինչ. կարգ մը բաներ ալ նե-
տելու առ յաւէտ:

Օրեր կ'անցնին. բայց հետզհետէ աւելի
զգալի կը դառնայ ջուրին գործած հսկայ
աւերը: Հեռաձայնը կը սկսի բանիլ. եւ
ահա տխուր լուրեր կը բարդուին:

Ինչպէս ծանօթ է, վաճառ ունի Վենե-
տիկի նահանգին մէջ հողային կալուած-
ներ, զիւղացիներու յանձնուած՝ մշակու-
թեան համար: Գրեթէ բոլոր այդ հողա-
մասերը՝ այլիներ, մրդաստաններ, բան-
ջարանոցներ, մնացած էին ջուրերու եւ
տիպի տակ: Աղէտին արդիւնքը զգալի
պիտի ըլլայ մինչեւ մէկ կամ երկու տա-
րի, ըստ մասնագէտներու. իսկ կորուստը
տղեատարներ է թէ՛ վաճառի եւ թէ՛ հողամը-
շակ զիւղացիներուն համար:

Դժբախտաբար, աղէտին չյաջողեցին
չոր ու արեւոտ օրեր, դոնէ մասամբ դար-
մանելու համար վնասները: Տպարանը
չարաթնելով մնաց ամուլ, մեքենաներու
նորոգութեան գործով լոկ դրաղած: Բա-
ւական մեծ էր իսկապէս կորուստը հնա-
տիպ մատենաներու եւ Բաղմովէպներու
հին շարքերուն մէջ. հարկ եղաւ յաջորդ
օրերուն, եւ ամիսներ շարունակ, թրջած
զրքերն ու թերթերը մէկիկ մէկիկ բանալ
ու փոխել՝ վաճառի վերին նորանցներուն
մէջ, վառարաններուն մօտիկ, չորցնելու
համար այդ բոլորը՝ պրակ առ պրակ, էջ
առ էջ:

Ոչ մէկ վնաս վարդապետներուն, աշա-
կերտներուն եւ աշխատաւորներուն:


Բաւական վնաս ունեցաւ նաեւ Մուրա-
տ-Պափայէլեան վարժարանը. հոն ջուրը
ներս խուժած է ստորին յարկի պատու-
հաններէն իսկ, միասին բերելով քաղաքի
ստորախաւերէն հաւաքած նաւթը ու սեւ-
ցնելով պատերը: Ամբողջ պարտէզը սուղ-
ուած է ջուրի տակ: Վարժարանը գուրկ
ուած է ջուրի տակ: Վարժարանը գուրկ
մնացած է երկաթալիւն լոյսէ ամբողջ
վեց օր: Բարերախտաբար, խոհանոցը
բարձր ըլլալով, վնաս չէ կրած. կերա-
կուրը անպակաս է եղած. հացը կարելի
եղած է ճարել մերձաւոր Մեսթրէ քաղա-
քէն: Դասարաններն ալ բոլոր երկրորդ
յարկի վրայ ըլլալով, չեն վնասուած. սա-



Ս. Ղազարի մայր դուռը՝ ջրասոյգ:

կայն վարի յարկը ամբողջ կեղտոտած է:
Վարժարանին նորոգութիւնները տակա-
ւին չէին աւարտած, ու փճացած են շի-
նութեան վերաբերեալ կարգ մը նախա-
նիւթեր. վնասուած են ստորին բոլոր սե-
նակները, մանաւանդ հեռատեսիլի եւ
շարժանկարի սրահը, լուսացքի մեքենա-
ները, ջերմութեան կեղրոնը, դպրոցա-
կան դրաղարանը, հանդերձատունը եւ
այլ յարակից մասեր: Ոչ մէկ վնաս անձի:
Դասերը կանոնաւորաբար շարունակուած
են, նոյնիսկ մոմի լոյսով:

Վնասուած է նաեւ քաղաքին մէջ գրո-
տուղ Հայոց Ս. Խաչ եկեղեցին. ջուրը
փճացուցած է գորգեր, ընկոյզէ հին ու
արժէքաւոր նստարաններ. ու թողած է



Սողոմոնեան սրահը

Եկեղեցին աւերակ վիճակի մէջ: Վեներաբլի բարեպաշտ ընտանիք մը, յաջորդ առաւ կանուխ փութացած է մաքրելու եւ կարգ ու կանոն դնելու հայոց եկեղեցւոյն մէջ, օգնելով հողաբարձու մեր վարդապետին:

Ազգային լուրը շուտով կը հասնի Միւլան ու արտասահման, մինչեւ Ամերիկա եւ Հայաստան, եւ իսկոյն, սրտեռանդն ազգակիցներ, թէ՛ վշտակցական քաջալերիչ նամակներով, նոյնիսկ հեռաձայնով, եւ թէ վեհանձն նուէրներով՝ ինքնաբերաբար կը փութան օգնել Միւլաբանութեան:

Փարիզի «Յառաջ» օրաթերթի Պատուարժան Խմբագրութիւնը, անմիջապէս, հանդանակութեան կը ձեռնարկէ, ինքնաբերաբար կոչով մը:

Միւլանի հայ զաւուրթը, գլխաւորութեամբ Գաղութային Միութեան, «Հայ Տուն»-ի եւ Մշակութային Միութեան իր կազմակերպութիւններուն, ինքնաբերաբար ազնուութեամբ կոչ կ'ուղղէ խալարնակ բոլոր հայերուն՝ փութալու օգնութեան:

Արտասահմանի բոլոր հայ թերթերու խմբագրութիւնները, սրաի մեծ ցաւով, արձագանգ կու տան ողորմելի դժբախտ դէպքին:

Ս. Ղազարի օգնութեան դիմելու շարժումը կ'անցնի ծովերը, կը հասնի մինչեւ մերձաւոր Արեւելք, Լիբանան, Եթովպիա, Արճենթին, Մ. Նահանգներ:

Լիզպոնի Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը, Հայ Բարեկործական Ընդհ. Միութեան Նիւ Եորքի կեդրոնը, բարեկործական այլ հաստատութիւններ, Տիկնանց խնամակալութիւններ, հայրենակցական միութիւններ, խմբագրութիւններ ու խմբագիրներ, ազնուահոգի անհատներ, մեծով սրտիկով, կը բերեն իրենց պատրաստակամ մասնակցութիւնը՝ Ս. Ղազարի վնասները փութով դարձանելու մըտահոգութեամբ:

Բայց ասոնց մասին՝ ուրիշ առիթով պիտի հաղորդենք աւելի մանրամասնօրէն:



Եկեղեցւոյ սրահը



Հնաւիպ մատեանները արեգակին կը սպասեն:

Բացառիկ յուզում ու քաջալերանք կ'ազդէ վանքին՝ Ս. Էջմիածնի վահակալ Վեհ. Վաղդէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի վշտակցական հեռագիրը, որուն կը յաջորդէ երկրորդ մը՝ սրտաբուխ նըւիրատուութեան մը հետ:

Բազմաթիւ այլ ցաւակցական նամակներ կը հասնին Հայաստանի գլխաւոր ու մշակութային կեդրոններէն, որոնք մեծ տիրութեամբ համակուած՝ լուրեր կ'ուղեն մեր ազգային:

Միւլաբանութիւնը մեծ յուզումով կը նըկատէ հայ ժողովուրդին վեհանձն ընթացքը, եւ մեծապէս քաջալերուած՝ իր անկեղծ ու խորին շնորհակալութիւնը կը յայտնէ բոլորին: Շնորհակալութիւն, որ պորձնականօրէն պիտի յայտնուի սրտազին ու կրկնապատիկ նուիրումով՝ հայ

մշակոյթին եւ ազգային դանձերու անարատ պահպանումին, որուն ի սպաս կերտուած է Ս. Ղազար:

Ս. Ղազարու միւլաբանները չափազանց յուզուած են, յատկապէս այն երեւոյթին համար՝ որ առանց իրենց կողմէ հրատարակուած կոչերու, հայ ժողովուրդը՝ ինքնաբերաբար ու սրտաբուխ պատրաստակամութեամբ՝ օժանդակութեան ամուրթումը մը բարձրացուց, սանձելու համար Աղբիականի խրոխտ ալիքները:

Հայ ժողովուրդին նուիրած լուծանքը պիտի ծառայէ ոչ միայն նիւթապէս զեղազարդելու Ս. Ղազարը՝ իր նախկին վայելչութեամբ, այլ պիտի տան շատ աւելի բարձր արդիւնք՝ բողբոջելով հայ մշակոյթի անդաւադանին մէջ, երախտազիտութեան ծաղիկներով:

Հ. Ն. Տ. Ն.